



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ  
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ  
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## Նախարան

Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեության համար 2021 թվականի առաջին կիսամյակը 2020 թվականի համեմատությամբ բնորոշվեց ավելի բնականոն ընթացքով:

ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 2020թ. հուլիսի 9-ի որոշմամբ արձանագրվեց իրական սեփականատերերի բացահայտման գործում Հայաստանի գրանցած առաջընթացը. Հայաստանը ստացավ ամենաբարձր գնահատականը: ԱՃԹՆ-ի խորհուրդը ընդունեց որոշում, որով.

*«խորհուրդը ընդունում է, որ Հայաստանը «բավարարող առաջընթաց» է արձանագրել EITI ստանդարտի 2.5 պահանջի՝ իրական սեփականատերերի բացահայտման սկզբնական չափորոշիչների իրականացման գծով:»*

Հաշվետու ժամանակահատվածում անկախ ադմինիստրատոր հանդիսացող Գրանթ Թորնթոն աուդիտորական ընկերության կողմից շարունակվեցին Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցի և ստորերկրյա հանքային ջրերի և մետաղական հանքանյութի վերամշակման ոլորտների նախնական ուսումնասիրության կազմման աշխատանքները: Զեկույցի նախագիծը ներկայացվեց ՀՀ վարչապետի աշխատակազմ, շրջանառվեց ԲՇԽ-ի անդամների և լիազոր պետական մարմինների միջև՝ կարծիքները ստանալու նպատակով:

Կիսամյակը բնութագրվեց արդյունավետ միջազգային համագործակցությամբ: 2021թ. մայիսին Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև ստորագրվեց «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» 500 հազար ԱՄՆ դոլար գումարի դրամաշնորհային նոր ծրագրի համաձայնագիրը: Դրամաշնորհի աջակցությամբ իրականացվելու են 2021-2024թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների հիմնական մասը, այն է՝ արդյունահանող ոլորտում միջազգային ստանդարտին համապատասխան կոնտեքստուալ և ֆինանսական թափանցիկության ապահովման աշխատանքները, տվյալների համակարգված

բացահայտումների ինքնաշխատ էլեկտրոնային նորարարական համակարգի ստեղծումը, 2 նոր ազգային զեկույցների կազմումը և հրապարակումը, ոլորտի հիմնական շահառուների կարողությունների հզորացման միջոցառումները, ոլորտի վերաբերյալ հանրային բանավեճի մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքները:

2021թ. հունիսի 3-ին ընդունվեցին նաև Հայաստանում գրացված իրավաբանական անձանց իրական շահառուների (սեփականատերերի) թափանցիկությունը էապես մեծացնող կարևոր իրավական ակտեր, որոնց հիմքում ԱՃԹՆ-ի գործընթացի ներքո 2020 թվականի փետրվարին սկսված մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերի ներդրման օրինակն էր: Այս իրավական ակտերի ընդունման արդյունքում իրական շահառուների հրապարակման պահանջը 2021 թվականի սեպտեմբերի 1-ից կտարածվի նաև այլ ոլորտների վրա՝ ըստ սահմանված ժամանակացույցի: 2023թ. հունվարի 1-ից իրական շահառուների հայտարարագրման պահանջը գործելու է բոլոր ոլորտների իրավաբանական անձանց համար:

Կատարված փոփոխությունները որոշակիորեն լուծեցին նաև մետաղական հանքարդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի հայտարարագրման գործընթացի վերաբերյալ մինչ այդ արձանագրված որոշակի բացերը և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու խնդիրները:

Ընդունված օրենքների փաթեթով միասնականացվեցին նաև «իրական շահառու» և ԱՃԹՆ-ի շրջանակում ներդրված «իրական սեփականատեր» հասկացությունները: Այսուհետ, բոլոր դեպքերում միասնական չափանիշներով կիրառվելու է «իրական շահառու» (ԻՇ) հասկացությունը:

2021թ. աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքային միջոցառումների կատարման ընթացքի մասին ավելի մանրամասն ներկայացվում է ստորև: Աշխատանքների կատարումը նկարագրված է ըստ Աշխատանքային ծրագրում սահմանված նպատակների ներքո կատարված միջոցառումների բաշխման և առաջին կիսամյակի (Q1, Q2) համար սահմանված կատարման ժամկետների:

# **1. Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում**

Միջոցառումներ 1-4, 6, 7

Հաշվետու ժամանակահատվածում շարունակաբար թարմացվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի բովանդակությունը, հրապարակվել և հանրությանը հասանելի են դարձել ոլորտը կարգավորող նոր իրավական ակտերը, ԱՃԹՆ-ի փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Օտարալեզու օգտվողների համար կայքի կարևոր տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

«ԱՃԹՆ կայքը սպասարկող «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի շարունակական խորհրդատվական աջակցությունը օգնել է վերացնել առցանց հաշվետվության համակարգում տվյալների մուտքագրման ժամանակ առաջացող խոչընդոտները:

Կայքում հայերեն և անգլերեն լեզուներով հրապարակվել է ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 6 նորություն<sup>1</sup> ԱՃԹՆ-ի տեղական և միջազգային գործընթացների, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ: Շարունակաբար թարմացվել են Facebook<sup>2</sup>, YouTube<sup>3</sup> և Twitter<sup>4</sup> ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը:

COVID-19 համավարակով պայմանավորված՝ հաշվետու ժամանակահատվածում իրազեկման առկա միջոցառումներ չեն իրականացվել, Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը այս ընթացքում նույնպես շարունակել է մնալ որպես տեղեկատվության տարածման հիմնական հարթակ: Շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումները և հաղորդակցությունն իրականացվել են կապի էլեկտրոնային միջոցներով:

ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 ֆինանսական տարին արտացոլող զեկույցի պաշտոնական ներկայացում/համաժողովը տեղափոխվել է 3-րդ եռամսյակ, քանի որ զեկույցի հանձնման ժամկետը 2.5 ամսով երկարաձգվել է՝ համաձայն զեկույցը կազմող Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերության 2021թ. հունվարի 19-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղղված խնդրանքի:

<sup>1</sup> <https://www.eiti.am/hy/Նորություններ>

<sup>2</sup> <https://www.facebook.com/EITIArmenia/>

<sup>3</sup> [https://www.youtube.com/channel/UCx\\_9yOLmQCj\\_rwy2wYgRh6A](https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A)

<sup>4</sup> [https://twitter.com/EITI\\_Armenia](https://twitter.com/EITI_Armenia)

## **2. Հաշվեքվորողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում**

### **2.1. Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում**

#### Միջոցառումներ 13-28

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից 2020թ. 4-րդ եռամսյակում կազմված Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին և երկրորդ զեկույցներում բացահայտված, ինչպես նաև ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ քննարկումների արդյունքում արձանագրված մետաղական հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների ճանապարհային քարտեզի նախագիծը 2021թ. հունվարի 20-ին ներկայացվել է ԲՇԽ-ի անդամներին, ինչպես նաև լիազոր մարմինների գործընկերներին՝ գնահատելու համար ներկայացված բացերը՝ ըստ իրականացման առաջնահերթության սանդղակի: Հարցերի առաջնահերթությունը պետք է որոշվեր ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցության հիմնական և այլընտրանքային (եթե փոխարինում է հիմնական անդամին) անդամների կողմից տրված գնահատականների միջինի միջին թվաբանական գումարով: ԲՇԽ-ի կառավարության և քաղաքացիական հասարակության երկու խմբակցությունները ներկայացրել են իրենց գնահատականները, որոնց հիման վրա կազմվել է ճանապարհային քարտեզում ներառված աշխատանքների առաջնահերթությունները: Այդ առաջնահերթությունները նախատեսվում է 3-րդ եռամսյակում քննարկել ԲՇԽ-ի անդամների և աշխատանքային խմբերի հետ՝ որոշելու համար հարցերի քննարկման և իրականացման ժամանակացույցը և արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստեր, ինչպես նաև աշխատանքային խմբերի հանդիպումներ տեղի չեն ունեցել: ԲՇԽ-ի անդամների միջև ողջ թղթակցությունը և համաձայնեցման ենթակա հարցերի քննարկումները տեղի են ունեցել էլեկտրոնային կապի միջոցներով: ԲՇԽ-ի կազմում և աշխատակարգում փոփոխություններ չեն եղել:

Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջազգային և տեղական առցանց միջոցառումների և հեռահար քննարկումների, մասնավորապես.

- 1) 2021թ. փետրվարի 11-ին տեղի ունեցած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 49-րդ նիստին նախորդող ԱՃԹՆ-ի Արևելյան Եվրոպայի և Ասիայի երկրների քարտուղարությունների ազգային համակարգողների առցանց հանդիպմանը,
- 2) 2021թ. փետրվարի 17-18-ին կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 49-րդ նստաշրջանին<sup>5</sup>,
- 3) 2021թ. փետրվարի 19-ին ԱՃԹՆ-ի միջազգային թիմի կողմից անցկացված «Առաջ նայելով՝ ակնարկ ռեսուրսների հարկման ոլորտում նորամուծությունների, ծախսերի թափանցիկության և եկամուտների կանխատեսման վերաբերյալ» առցանց սեմինարին<sup>6</sup>,
- 4) 2021թ. մարտի 17-ին ԱՃԹՆ-ի միջազգային թիմի և Բաց կառավարման գործընկերության կողմից կազմակերպված «Իրական սեփականատերերը արդյունահանման ոլորտում և դրանից դուրս՝ Ֆիլիպինների օրինակը» թեմայով առցանց քննարկմանը, որտեղ կազմակերպիչների հրավերով Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի իրավաբանական դեպարտամենտի տնօրեն, ԲՇԽ-ի նախկին անդամ Պերճ Խաչատրյանը ներկայացրեց ԻՍ-ի ոլորտի հայաստանյան բարեփոխումները՝ Հայաստանի հանքարդյունաբերողների տեսանկյունից:
- 5) 2021թ. մարտի 30-ին ԱՃԹՆ-ի միջազգային թիմի կողմից կազմակերպված «Ակնկալիքների զարգացում. ինչպե՞ս են պետական արդյունահանող ընկերությունները լուծում թափանցիկության հարցը» թեմայով առցանց վեբինարին<sup>7</sup>,
- 6) 2021թ. ապրիլի 15-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն, երկխոսություն» ծրագրի հերթական առցանց քննարկմանը,
- 7) 2021թ. մայիսի 26-ին ԱՃԹՆ-ի միջազգային թիմի կողմից կազմակերպված «ԱՃԹՆ և գենդերային հարցեր. դեպի ավելի արդար ապագա» առցանց

<sup>5</sup> <https://eiti.org/document/49th-eiti-board-meeting>

<sup>6</sup> <https://eiti.org/event/looking-ahead-snapshot-of-innovations-in-resource-taxation-cost-transparency-revenue>

<sup>7</sup> <https://eiti.org/event/evolving-expectations-how-stateowned-extractive-companies-are-tackling-transparency>

քննարկմանը<sup>8</sup>, որի ժամանակ Հայաստանի ԱՃԹՆ քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրեց Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում գենդերային հարցերին վերաբերվող իրողությունները,

- 8) 2021թ. մայիսի 27-ին կայացած ԱՃԹՆ-ի միջազգային թիմի կողմից կազմակերպված «Թաքնված, բայց բարձր գներ. Ի՞նչն է վտանգում մատակարարների թափանցիկությունը» թեմայով առցանց քննարկմանը<sup>9</sup>,
- 9) 2021թ. մայիսի 31-ին-ին տեղի ունեցած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 50-րդ նիստին նախորդող ԱՃԹՆ-ի տարածաշրջանային քարտուղարությունների, ազգային համակարգողների առցանց խորհրդակցությանը,
- 10) 2021թ. հունիսի 4-ին ԱՃԹՆ միջազգային թիմի կողմից անցկացվող և ԱՃԹՆ-ի կիրառմանը վերաբերվող առցանց հարցմանը,
- 11) 2021թ. հունիս 9-10-ը կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 50-րդ նստաշրջանին<sup>10</sup>,
- 12) 2021թ. հունիսի 9-ի «Խորացնելու կիրառություն՝ նորարարություններ ԱՃԹՆ հաշվետվություններում (ճկուն հաշվետվություններ)» թեմայով նիստին<sup>11</sup>,
- 13) 2021թ. հունիսի 15-ին ՏԿԵՆ-ում կայացած հանքարդյունահանող ձեռնարկությունների համար առաջարկվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևի նախագծի քննարկմանը,
- 14) 2021թ. հունիսի 21-ին ԱՃԹՆ-ի միջազգային թիմի կողմից անցկացված «ԱՃԹՆ-ի դերը արդյունահանման ոլորտի կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման գործում» թեմայով առցանց հանդիպմանը<sup>12</sup>:

2021թ. ապրիլին 20-ին հեռահար համաձայնեցման միջոցով ԲՇԽ-ի կողմից հաստատվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային առաջնահերթություններն ու Հայաստանի ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագիրը, որի նախագիծը մշակվել և կազմվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի նախորդ տարիների

<sup>8</sup> <https://eiti.org/event/eiti-gender-towards-more-equitable-future>

<sup>9</sup> <https://eiti.org/event/hidden-with-high-cost-what-is-at-stake-with-supplier-transparency>

<sup>10</sup> <https://eiti.org/event/50th-eiti-board-meeting>

<sup>11</sup> <https://eiti.org/event/implementation-deep-dive-innovations-in-eiti-reporting>

<sup>12</sup>

[https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/06/22/role-of-eiti-in-mitigating-corruption/107?fbclid=IwAR1xLbPjt8ZSe4zsnJ\\_AJLOi9YL0g3E8IJWHw8Smz4yOeWRjroG5YMIUaf0](https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/06/22/role-of-eiti-in-mitigating-corruption/107?fbclid=IwAR1xLbPjt8ZSe4zsnJ_AJLOi9YL0g3E8IJWHw8Smz4yOeWRjroG5YMIUaf0)

աշխատանքային ծրագրերը ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից իրականացված վավերացման արդյունքներով որակվել են «գերազանցող առաջընթաց» գնահատականով՝ ծրագրի ձևաչափում էական փոփոխություններ չեն կատարվել: Աշխատանքային ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային առաջնահերթությունները, ԱՃԹՆ-ի զարգացման միջազգային միտումները, ընթացիկ աշխատանքների շարունակականությունն ապահովելու անհրաժեշտությունը: Առաջիկա 2 տարիների իրականացվելիք միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները սահմանելիս՝ Հայաստանի ԱՃԹՆ-ն առաջնորդվել է նաև Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» 2021-2024 թվականների լրացուցիչ ֆինանսավորման դրամաշնորհային ծրագրով նախանշված ուղղություններով: Հաստատված փաստաթուղթը հասանելի է ԱՃԹՆ կայքում<sup>13</sup>:

2021թ. առաջին կիսամյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և հեռահար քննարկումներ է ունեցել ԱՃԹՆ միջազգային քարտուղարության, տարածաշրջանային քարտուղարությունների, Բաց կառավարման գործընկերության, Օփեն Օուներշիփ կազմակերպության, VXSoft տեխնոլոգիական ընկերության, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների հետ: Տարբեր գործընկերների հետ քննարկումներն ընդգրկել են տարբեր թեմաների շրջանակ՝ ընթացիկ հարցերից, խորհրդատվությունից, տեղեկատվության տրամադրումից մինչև առաջիկա տարիներին ԱՃԹՆ-ի ներդրման միջոցառումներին միջազգային գործընկերների աջակցության հարցերը: Միջազգային քարտուղարության հետ համագործակցության աշխատանքները ընթացել են, մի կողմից, հայաստանյան ԱՃԹՆ-ի փաստաթղթերի կամ գործընթացների վերաբերյալ միջազգային թիմի կողմից տրամադրվող խորհրդատվության, պարզաբանումների և, հայաստանյան քարտուղարության կողմից՝ ըստ պահանջի ներկայացվող տեղեկատվության, հարցադրումների և այլ գործակցության ձևերով: Համաշխարհային բանկի (ՀԲ) հայաստանյան գրասենյակի հետ կայացած քննարկումների արդյունքում «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային առաջին ծրագրի ավարտի ժամկետը երկարաձգվեց մինչև 2021թ. հուլիսի 31-ը, որի արդյունքում ավարտին հասցվեցին Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ.

<sup>13</sup> <https://www.eiti.am/hy/%D4%B1%D5%83%D4%B9%D5%86-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80>



աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումներն, այդ թվում՝ ԱՃԹՆ 2019թ. ազգային զեկույցի կազմումը և դրա ներկայացման համաժողովը:

Հաջողությամբ ավարտվեցին ՀԲ-ի կողմից Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցելու նոր դրամաշնորհային համաձայնագրի ստորագրման աշխատանքները: 2021թ. մայիսի 17-ին ստորագրվեց և հունիսի 28-ին ուժի մեջ մտավ ՀԲ-ի հետ կնքված «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցության լրացուցիչ ֆինանսավորում» նամակ-համաձայնագիրը, որով ՀՀ վարչապետի աշխատակազմին ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներին աջակցելու նպատակով տրամադրվում է 500 հազար ԱՄՆ դոլար գումարի դրամաշնորհ: Այդ դրամաշնորհի միջոցների հաշվին 2021-2024թթ.-ին ֆինանսավորվելու են արդյունահանող ոլորտում միջազգային ստանդարտին համապատասխան կոնտեքստուալ և ֆինանսական թափանցիկության ապահովման աշխատանքները, տվյալների համակարգված բացահայտումների ավտոմատացված էլեկտրոնային նորարարական համակարգի ստեղծումը, առաջիկա 2 տարիների ազգային զեկույցների կազմումը և հրապարակումը, ոլորտի հիմնական շահառուների կարողությունների հզորացման միջոցառումները, բազմաշահառու խմբի կողմից ոլորտի վերաբերյալ հանրային բանավեճի մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքները:

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության 2021թ. առաջին կիսամյակի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքերը իրականացվել են՝ համաձայնեցնելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ու Համաշխարհային բանկի հետ՝ որպես դոնոր կազմակերպության: Հայաստանում COVID-19-ի համաճարակով պայմանավորված բոլոր շահառուների, գործընկերների, ԲՇԽ-ի անդամների, աշխատանքային խմբերի անդամների հետ հանդիպումները կազմակերպվել են առցանց՝ ապահովելով ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներ ու համագործակցություն:

2021թ. առաջին կիսամյակում ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարությունը կազմել և ԲՇԽ-ին է ներկայացրել նաև 2020թ. ԱՃԹՆ-ի տարեկան առաջընթացի հաշվետվությունը և ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի կատարողականը:

2021թ. ապրիլի 20-ին հեռահար համաձայնեցման միջոցով ԲՇԽ-ի կողմից հաստատվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. 4-րդ եռամսյակի առաջընթացի հաշվետվությունը<sup>14</sup>:

## **2.2. ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում**

### Միջոցառում 30

Հաշվետու ժամանակաշրջանում անկախ ադմինիստրատոր Գրանթ Թորնթոն աուդիտորական ընկերությունը կատարել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցի և ստորերկրյա հանքային ջրերի ու մետաղական հանքանյութի վերամշակման ոլորտների նախնական ուսումնասիրության կազմման աշխատանքները:

Աշխատանքների իրականացման ընթացքում Գրանթ Թորնթոն ընկերությունն ակտիվ համագործակցել է Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, ԲՇԽ-ի, լիազոր մարմինների պատասխանատուների, մետաղական հանքաքար արդյունահանող ընդերքօգտագործողների հետ, քննարկել զեկույցի կազմման ընթացքում առաջացած հարցերը, ստացել անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և տվյալներ:

Հունիսի 2-ին Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցի նախագիծը տրամադրվել է ԲՇԽ-ի և պետական լիազոր մարմինների կարծիքին: Ձեկույցի նախագծի անգլերեն թարգմանությունը տրամադրվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կարծիքին:

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտների վերաբերյալ նախնական ուսումնասիրության

<sup>14</sup>

<https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A B%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

կազմման նպատակով Պետական եկամուտների կոմիտեն ՀՀ վարչապետի աշխատակազմ և խորհրդատուին է տրամադրել այդ ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների կողմից վճարված հարկերի և վճարների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն:

ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 ֆինանսական տարին արտացոլող զեկույցի պաշտոնական ներկայացում/համաժողովը տեղափոխվել է 3-րդ եռամսյակ, քանի որ զեկույցի հանձնման ժամկետը 2.5 ամսով երկարաձգելու խնդրանքով 2021թ. հունվարի 19-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին էր դիմել զեկույցը կազմող Գրանթ Թորնթոն աուդիտորական ընկերությունը, համաձայն որի երկարաձգվել էր նշված ընկերության հետ կնքված պայմանագիրը:

### **2.3. Իրական սեփականատերերի բացահայտման առցանց հանրային ռեգիստրի գործարկում, իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրային վերահսկողության հնարավորությունների աճ**

#### *Միջոցառումներ 41-47*

2021թ. փետրվարից գործարկվել է ԻՍ հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգը<sup>15</sup>: 2021թ.-ի համար մինչև փետրվարի 20-ը ԻՍ հայտարարագրեր ներկայացնելու պարտավորություն ունեցող ընկերություններն արդեն օգտագործել են հարթակը առցանց հայտարարագրեր ներկայացնելու համար: Հարթակը ներկայացնելու հանրային իրազեկման միջոցառումը որոշվել է համատեղել ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցի ներկայացման համաժողովի հետ՝ մեծացնելու համար հանրային լսարանը և լուսաբանման շրջանակը:

---

<sup>15</sup> <https://bo.e-register.am/am/auth>

ԱՃԹՆ-ի միջազգային թիմի կողմից պատրաստվող 2021թ.-ի առաջընթացի վերաբերյալ հերթական հաշվետվության<sup>16</sup> մեջ անդրադարձ է կատարվել ԻՍ-ների բացահայտման հայաստանյան փորձին, որտեղ, մասնավորապես նշվել է՝

*«2017 թվականից դառնալով ԱՃԹՆ-ի անդամ երկիր՝ Հայաստանը իրական սեփականատերերի թափանցիկության հարցում մշտապես ցուցադրել է ամուր հանձնառություն: 2018 թվականից սկսած Հայաստանի կառավարությունը ամրապնդում է իրական սեփականատերերի բացահայտման իրավական դաշտը՝ երկրի հակակոռուպցիոն ավելի լայն օրակարգին համապատասխան: Հայաստանի ԱՃԹՆ-ն, աշխատելով Համաշխարհային բանկի, Բաց կառավարման գործընկերության (OGP), OpenOwnership կազմակերպության և տեղական գործընկերների հետ, ստեղծել է բաց տվյալների սկզբունքներին համապատասխան գործող հանրային ռեգիստր, որի փորձարկումն իրականացվեց 2021թ. սկզբին: Ընկերություններն իրական սեփականատերերի հայտարարագրերը ներկայացնում են էլեկտրոնային համակարգի միջոցով, և ռեգիստրը այդպիսով հեշտացնում է իրական սեփականության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքագրման գործընթացը: Այն նաև ավտոմատ կերպով ստուգում է մուտքագրվող մի շարք տվյալներ և հանրության համար մատչելի դարձնում տեղեկատվությունը:»*

Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնող հանքարդյունահանող ընկերություններին ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից շարունակական խորհրդատվություն է տրամադրվել առցանց հայտարարագրերի ներկայացնելու ընթացքում առաջացող հարցերի և խնդիրների վերաբերյալ:

2021թ. հունիսի 3-ին ընդունվեցին Հայաստանի Հանրապետությունում գրացված իրավաբանական անձանց իրական շահառուների թափանցիկությունը էապես մեծացնող կարևոր իրավական ակտեր<sup>17</sup>, որոնց հիմքում ԱՃԹՆ-ի գործընթացի ներքո մետաղական հանքարդյունաբերության ոլորտի

<sup>16</sup> <https://eiti.org/document/eiti-progress-report-2021>

<sup>17</sup>

<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/06/23/%D5%88%D5%BE-%D5%A7-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B7%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B6/108/>

ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերի ներդրման օրինակն էր:

Ընդունված օրենքների փաթեթով միասնականացվեցին «իրական շահառու» և ԱՃԹՆ-ի շրջանակում ներդրված «իրական սեփականատեր» հասկացությունները: Այսուհետ, բոլոր դեպքերում միասնական չափանիշներով կիրառվելու է «իրական շահառու» (ԻՇ) հասկացությունը:

Այս իրավական ակտերի ընդունման արդյունքում իրական շահառուների հրապարակման պահանջը տարածվեց նաև այլ ոլորտների վրա՝ ըստ սահմանված ժամանակացույցի: 2023թ. հունվարի 1-ից նշված պահանջը գործելու է բոլոր ոլորտների իրավաբանական անձանց համար: Կատարված փոփոխությունները որոշակիորեն լուծեցին նաև մետաղական հանքարդյունահանող ընկերությունների ԻՇԱ-ի հայտարարագրման գործընթացի վերաբերյալ մինչ այդ արձանագրված որոշակի բացեր և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու խնդիրներ:

ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարությունը ԻՇ վերաբերյալ հայտարարագրերի ներկայացման պարտավորություն ունեցող ընդերքօգտագործողների համար պատրաստել է նոր օրենսդրական փոփոխությունները ներկայացնող ուղեցույց, որը հասանելի է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում<sup>18</sup> :

Իրական սեփականատերերի բացահայտման ոլորտում Հայաստանի ԱՃԹՆ-ի գրանցած արդյունքները արտահայտվել են ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 2021թ. հունիսի 10-ի որոշման մեջ<sup>19</sup>, որով արձանագրվել է Հայաստանի ամենաբարձր՝ «բավարարող առաջընթաց» գնահատականը իրական սեփականատերերի բացահայտման սկզբնական չափանիշների բավարարման մասով: Այս վավերացման համար հիմք է ծառայել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԻՇ-ի բացահայտման գործում Հայաստանի արձանագրած առաջընթացը: 2.5 պահանջի վավերացման երկրորդ փուլին նախապատրաստվելու համար Հայաստանից պահանջվում է 2022թ.

<sup>18</sup>

[https://www.eiti.am/file\\_manager/EIT1%20Documents/Beneficial%20Ownership/BO\\_disclosures\\_amendments\\_Guideline\\_for\\_mining\\_sector\\_EITI\\_national\\_secretariat\\_03.06.2021.pdf](https://www.eiti.am/file_manager/EIT1%20Documents/Beneficial%20Ownership/BO_disclosures_amendments_Guideline_for_mining_sector_EITI_national_secretariat_03.06.2021.pdf)

<sup>19</sup> <https://eiti.org/board-decision/2021-32>

հունվարից սկսած բացահայտել նաև արդյունահանման թույլտվություն ստացած կամ դրա համար դիմած բոլոր ընկերությունների, այդ թվում՝ փակ բաժնետիրական ընկերությունների իրավական սեփականատերերին (մասնակիցներին): Այդ նպատակով առաջիկայում կանցկացվեն լրացուցիչ հանդիպումներ, քննարկումներ, վերլուծություններ, իրավական աշխատանք՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի երկրորդ վավերացման ժամանակ 2.5 պահանջը բավարարելու համար:

#### **2.4. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման վերաբերյալ ԲՇԽ-ի որոշման դեպքում՝ ՀՀ իրավական դաշտի համապատասխանեցում**

##### *Միջոցառումներ 48-49*

Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նպատակահարմարության վերաբերյալ ԲՇԽ-ի որոշման կայացման նպատակով Գրանթ Թորնթոն աուդիտորական ընկերությունը 2019թ. ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցին զուգահեռ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտների նախնական ուսումնասիրության կազմման աշխատանքները: Նախնական ուսումնասիրության ներկայացումը, հետևաբար նաև ԲՇԽ-ի կողմից դրա քննարկման ժամկետները հետաձգվել են 3-րդ և 4-րդ եռամսյակ, քանի որ ուսումնասիրության հանձնման ժամկետը 2.5 ամսով երկարաձգվել է՝ համաձայն Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերության խնդրանքի:

### **3. ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում**

#### *Միջոցառումներ 53-55*

ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակումը և ուսումնասիրություն իրականացնող կազմակերպության ընտրությունը հետաձգվել է, քանի որ դրա ֆինանսավորման աղբյուր հանդիսացող Համաշխարհային Բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի գործողության ժամկետում՝ մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը, նախատեսված միջոցառումների կատարումը իրատեսական չի եղել: Աշխատանքները կիրականացվեն հաջորդ կիսամյակում և 2022 թվականի սկզբին «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին. Լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ:

2021թ. առաջին կիսամյակում ԲՇԽ-ի և այլ շահառուների կարողությունների հզորացման՝ 2021-22թթ աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներ տեղի չեն ունեցել:

### **4. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում**

#### *Միջոցառումներ 68-71*

ԲՇԽ-ի անդամները և ԱՃԹՆ քարտուղարությունը քննարկել և իրենց առաջարկություններն ու կարծիքն են տրամադրել 2021թ. մարտի 1-ին ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված և պատասխանատու հանքարդյունաբերությանը անդրադարձող «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման տեխնիկական առաջադրանքի» նախագծի վերաբերյալ:

2021-22թթ. աշխատանքային ծրագրի այս բաժնում նախատեսված այլ աշխատանքներ առաջին կիսամյակում չեն կատարվել:

## Հաշվետու ժամանակահատվածում ընդունված՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտերը

- 2021թ. հունիսի 3-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ընդունեց օրենքների փաթեթը<sup>20</sup>, որով ընդլայնվում է Հայաստանում իրական շահառուների բացահայտման պարտավորություն ունեցող կազմակերպությունների շրջանակը և որոշակի փոփոխություններ ու լրացումներ են կատարվում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրական շահառուների հայտարարագրման կարգում:

- 2021 թվականի ապրիլի 1-ի ընդունվեց ՀՀ կառավարության «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համայնքների և (կամ) բնակավայրերի ցանկի կազմման և ըստ համայնքների և (կամ) բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը սահմանելու մասին» N 447-Ն որոշումը<sup>21</sup>, որի նպատակը օրենքի համաձայն մասհանումներ ստացող ազդակիր համայնքների և (կամ) բնակավայրերի որոշման և միևնույն ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող մեկից ավելի համայնքների և (կամ) բնակավայրերի միջև սույն օրենքով սահմանված մասհանումների գումարների բաշխման համամասնությունների որոշման իրավական հիմքի ապահովումն է:

- 2021թ. մայիսի 3-ին ընդունվեց «Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի (ՀՀ ՊՊՀ) 2000 թվականի դեկտեմբերի 12-ի N 86 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՏԿԵ նախարարի N 04-Ն հրամանը<sup>22</sup>:

<sup>20</sup>

<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/06/23/%D5%88%D5%BE-%D5%A7-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B7%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B6/108/>

<sup>21</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151286>

<sup>22</sup>

[https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152372&fbclid=IwAR15Wh7jW6KJ3Wlc\\_n0yILeHwuV\\_rPj0ajDuRfetcu0XcjcGW3rNkOwzh8](https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152372&fbclid=IwAR15Wh7jW6KJ3Wlc_n0yILeHwuV_rPj0ajDuRfetcu0XcjcGW3rNkOwzh8)



- 2021թ. հունիսի 29-ին ընդունվեց ՏԿԵ նախարարի N 34-Լ հրամանը, որով հաստատվեց ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը<sup>23</sup>:

## **5. Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից կատարված աշխատանքները<sup>24</sup>**

### Միջոցառումներ 11-12

2021 թվականի 1-ին կիսամյակում ԱՄՆ ՄԶԳ «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ծրագրի շրջանակում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ գործընկերների հետ աշխատանքի արդյունքում իրականացվել են հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

- Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության երկխոսության գործընթացի և քննարկումների արդյունքում 2021թ. ապրիլին հրապարակել են<sup>25</sup> ամփոփ փաստաթղթեր և քաղաքականության համառոտագրեր, որոնք վերաբերում են հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային պայմաններին և աշխատանքային անվտանգությանը, ազդակիր համայնքների դիմակայունությանը աղետների նկատմամբ, հանքարդյունաբերության բացասական ժառանգության մեղմման հարցերին և ոլորտի պատասխանատվությանը շրջակա միջավայրի և հանրային առողջության առումով:
- Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը 2021 թվականի ընթացքում պատրաստել է հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի

<sup>23</sup> <http://www.mtad.am/files/legislation/700.pdf>

<sup>24</sup> Այս ենթաբաժնի բովանդակությունը լրացվել է ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից և չի հանդիսանում ԲՇԽ-ի ընդհանուր տեսակետը:

<sup>25</sup> <https://crm.aua.am/hy/mpdpy/mining-policy-dialog-process/>

ձեռնարկ՝ միտված երիտասարդների ուսուցանմանը և վերջիններիս ներգրավմանը հանքարդյունաբերության վերահսկման գործընթացներում:

- Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը հրապարակել է հանքարդյունաբերության վերաբերյալ տեղեկատվական առցանց հարթակ<sup>26</sup>, որը տրամադրում է քաղաքացիական հասարակությանը, լրատվամիջոցներին, գիտնականներին, կառավարությանը և մասնավոր հատվածին հասանելիություն ուրտի վիճակագրական տվյալներին, հետախուզման և շահագործման լիցենզիաներին, հաշվետվությունների, գիտական աշխատանքների, վերլուծությունների, օրենքների և քարտեզների:
- «Էկոլոր» տեղեկատվական ՀԿ-ն հաշվետու ժամանակաշրջանում հրապարակել է «Մարջան մայնինգ» ՍՊԸ, «Ֆորչուն ռեզորսիս» ՍՊԸ, «Պարամաունտ գոլդ» ընկերությունների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները<sup>27</sup>, ինչպես նաև ուսումնասիրել է չաշխատող կամ մասամբ աշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պայմանագրային պարտավորությունները, դրանց չկատարման պատճառները և պատասխանատվության հետ կապված հարցերը: Արդյունքում կազմվել և հրապարակվել են նաև «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ի, «Թաթթոուն» ՍՊԸ-ի, «Լիճքվազ» ՓԲԸ-ի, «Ատ-Մետալս» ՓԲԸ-ի, «Ղարագույաններ» ՓԲԸ-ի, «Գեղի Գոլդ» ՍՊԸ-ի, «Լեռ Էքս» ՍՊԸ-ի, «Վայք գոլդ» ՍՊԸ, «Վարդանի զարթոնքը» ՍՊԸ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվությունները<sup>28</sup>: Ծրագրի ավարտին նաև հրապարակվել է «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի

<sup>26</sup> <https://mininginfo.am/hy/>

<sup>27</sup> <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/marjanreportnew.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/fortuneresoursisnew.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/paramauntgoldnew.pdf>

<sup>28</sup> <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/aktivlernagortsnew16062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/tatstounlichqnew16062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/lichqvazfinal16062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/atmetals16062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/gharagulyannernew16062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/geghigoldnew16062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/lerexnew16062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/vayqgoldfinalnew18062021.pdf>  
<https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/vardanizartongnew16062021.pdf>

ամփոփ զեկույցը<sup>29</sup>, ինչպես նաև Ամուլսարի<sup>30</sup> ոսկեբեր քվարցիտների հանքավայրի և Գլաձորի<sup>31</sup> բազմամետաղային հանքավայրերի վերաբերյալ ուսումնասիրությունները: Նկարահանվել է նաև «Հայաստանի բաց վերքերը. չգործող հանքեր» տեսաֆիլմը, որը կներկայացվի «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից 2021թ. դեկտեմբերին նախատեսվող միջոցառման ժամանակ:

- «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն 2021 թվականի ընթացքում իրականացրել է իրազեկման հանդիպումներ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի մի շարք ազդակիր համայնքներում: Մասնավորապես՝ 16 համայնքներում տեղի ունեցած հանդիպումներին մասնակցել են շահառու՝ տեղացի բնակիչներ, ՏԻՄ ներկայացուցիչներ և այլք, ովքեր իրազեկվել են իրենց համայնքներում գործող հանքարդյունաբերական ընկերությունների, նրանց կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների, ինչպես նաև ԱՃԹՆ ստանդարտի, ընթացակարգերի և օրենսդրական դաշտի վերաբերյալ: Ի լրումն՝ նախապես մշակված հարցաթերթիկների հիման վրա անցկացվել են հարցազրույցներ ՏԻՄ-երում և բնակչության, քաղաքացիական հասարակության շրջանում՝ պարզելու ընդերքօգտագործողների գործունեության հետևանքները տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական, բնապահպանական վիճակի վրա, ինչպես նաև դրանցում ներառված համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ:
- Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում ընտրված 6 լրագրողների կողմից իրականացվել է հետաքննությունների շարք, որոնց նպատակն է խթանել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանում հրապարակվել է հետաքննական լրագրողական 10 նյութ, որոնց միջոցով բարձրաձայնվել են հանքարդյունաբերության հետ կապված խնդիրները Սյունիքի, Արմավիրի, Արարատի, Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում:<sup>32</sup>

<sup>29</sup> <https://www.ecolur.org/files/uploads/ecolurminingbigreport.pdf>

<sup>30</sup> <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/amulsarfinal111.pdf>

<sup>31</sup> <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/gladzornew16062021.pdf>

<sup>32</sup> <https://transparency.am/hy/news/view/3282>

- Ծրագրի շրջանակում «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն 2021 թվականի 1-ին կիսամյակում թողարկել է 1 հետաքննական հոդված<sup>33</sup> և 11 հոդված, 2 մուլտիմեդիա հոդված և 1 ինֆոգրաֆիկ, որոնք նպատակ ունեն խթանելու հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը և իրական սեփականատերերի բացահայտումը:

---

<sup>33</sup> <https://hetq.am/hy/article/131702>; <https://hetq.am/hy/article/131746>

**ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի 2021 թվականի 1-ին կիսամյակի կատարողականը**

ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջը	Հ/Հ	Միջոցառում	Արդյունքը	Պատասխանատուն	Ժամկետները	Նշումներ
<b>Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում</b>						
7.2	1	ԱՃԹՆ կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ	Կայքում հրապարակված գեկույցներ, հաշվետվություններ, տեսագրություններ, հոլովակներ, իրավական ակտեր, նորություններ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ	2021 2022	
7.2	2	ԱՃԹՆ-ի կայքի ընթացիկ սպասարկում, ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքներ	Կայքի և հաշվետվությունների առցանց հարթակի անխափան աշխատանք	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, սպասարկող կազմակերպություն	2021 2022	

7.1	3	Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
7.1	4	ԱՃԹՆ-ի գործընթացների և արձանագրված արդյունքների վերաբերյալ հանրային հրազեկում և լուսաբանում (Media, TV, YouTube, Twitter, facebook և այլն)	Տարբեր սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
7.2	6	ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման խորհրդատվություն	ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների հարթակում հրապարակված հաշվետվություններ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
7.1	7	Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահառուների հետ աշխատանքային հանդիպումների հրականացում	Հանդիպումներ, այդ թվում՝ մարզային և համայնքային շահառուների. կրթական հաստատությունների և լայն հասարակայնության խմբերի հետ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	

7.1	8	ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 ֆինանսական տարին ներկայացնող ազգային զեկույցի պաշտոնական ներկայացում/կոնֆերանս	ԱՃԹՆ-ի կոնֆերանս (առկա կամ առցանց)	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	
7.2	11	«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄՁԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում	<ul style="list-style-type: none"> <li>• Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի ձեռնարկ հանրային վերահսկողություն իրականացնելու համար,</li> <li>• Հանքարդյունաբերության վերաբերյալ տեղեկատվական առցանց հարթակ,</li> <li>• Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվության վերաբերյալ ուսումնասիրություն</li> <li>• Հետաքննական նյութեր /տեսանյութեր, հոդվածներ/</li> </ul>	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, Էկոլուր տեղեկատվական ՀԿ, Հետաքննող լրագրողներ ՀԿ	Q2, Q3, 2021	

	12	«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում	Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ դասընթացներ ՔՀԿ-ների համար, քննարկումներ շահագրգիռ խմբերի հետ, հանդիպումներ ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ	Թրանսփարենսի հինգերեքշնչի հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, Էկոլուր տեղեկատվական ՀԿ	Q2, Q3, 2021	
<b>Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում</b>						
<b>Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում</b>						
7.3 7.4	13	ԱՃԹՆ 1-ին և 2-րդ գեկույցներում արձանագրված՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների ճանապարհային քարտեզ մշակում	Ճանապարհային քարտեզի նախագիծ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, 2021	
	14	ԲՇԽ-ի կողմից ճանապարհային քարտեզի հաստատում	Ճանապարհային քարտեզ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	



	15	ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում՝ ճանապարհային քարտեզում ամրագրված բացերին անդրադառնալու համար	աշխատանքային խմբեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, պետական շահագրգիռ մարմիններ	Q2, 2021	
	16	Ճանապարհային քարտեզում արձանագրված բացերի վերացման աշխատանքներ՝ ըստ աշխատանքային խմբերի	աշխ. խմբերի հանդիպումներ, քննարկումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր	ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պատկան մարմիններ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, Q3, Q4 - 2021 2022	
1.4	17	ԲՇԽ-ի նիստերի անցկացում	ԲՇԽ-ի նիստեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, Q3, Q4 - 2021 Q1, Q2, Q3, Q4 - 2022	Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստեր չեն անցկացվել: ԲՇԽ-ի որոշումները կայացվել են ԲՇԽ-ի աշխատակարգով սահմանված կարգով՝ էլեկտրոնային եղանակով:

1.4	18	ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում	հանդիպումներ	ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
1.4	19	ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում	ՀՀ վարչապետի որոշում, ԲՇԽ	ԲՇԽ-ի խմբակցություններ, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 Q4, 2022	
	21	ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն	ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
1.5	22	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թթ. աշխատանքային ծրագրի կատարողականի կազմում և հաստատում	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թթ. աշխատանքային ծրագրի կատարողական	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թթ. աշխատանքային ծրագրի կատարողականը , որպես ԱՃԹՆ-ի իրականացման 2020 թվականի հաշվետվության

						մաս, հաշվետու ժամանակահատվածում գտնվում է մշակման փուլում և կիրառարակվի 2020 թվականի 3-րդ եռամսյակում:
1.5	23	ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի մշակում և հաստատում	ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագիր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, 2021	
	24	Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	

	25	Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք	Հայաստանի ԱՃԹՆ-ի իրականացման փաստաթղթեր, հաշվետվություններ, աշխատանքային ծրագրեր, հանդիպումներ, աջակցություն ԲՇԽ-ին, տեղական և միջազգային համագործակցություն, խորհրդատվության տրամադրում, պետական բյուջեի փաստաթղթերի և հաշվետվությունների կազմում, գնումների գործընթացի ապահովում	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
1.4 7.4	26	ՀՀ ԱՃԹՆ-ի 2020թ. տարեկան հաշվետվության կազմում և հաստատում	ՀՀ ԱՃԹՆ-ի 2020 տարեկան հաշվետվություն	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2 - 2021	ԱՃԹՆ-ի իրականացման 2020 թվականի հաշվետվությունը ընթացիկ ժամանակահատվածում գտնվում է մշակման փուլում և կիրառարակվի 2020 թվականի

						3-րդ եռամսյակում:
1.4 7.4	27	ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում	եռամսակային հաշվետվություններ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, Q3, Q4, 2021 Q1, Q2, Q3, Q4, 2022	
1.4	28	Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ	նամակագրություն, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր, միջազգային աշխատանքային խմբերի առցանց հանդիպումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
<b>ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում</b>						
4.8	30	Հայաստանի ԱՃԹՆ-ի երրորդ՝ 2019թ. հաշվետու տարվա զեկույցի մշակում	ԱՃԹՆ-ի զեկույցի նախագիծ, ԱՃԹՆ-ի զեկույց, ամփոփ տվյալների ձևաչափ	Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q4, 2020 - Q2, Q3, 2021	

<p>7.3 7.4</p>	<p>31</p>	<p>ԱՃԹՆ-ի երրորդ՝ 2019թ.-ի զեկույցի ներկայացման արդյունքներով արձանագրված (այդ թվում, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից) առաջարկությունների, թերությունների և բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկություններն իրականացնելու եղանակները որոշելու և անհամապատասխանությունները վերացնելու համար</p>	<p>Հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր, ԲՇԽ-ի նիստ</p>	<p>ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, պատկան մարմիններ</p>	<p>Q3, Q4, 2021</p>	
<p>7.2 7.3</p>	<p>32</p>	<p>Նախնական ուսումնասիրության արդյունքներով ԲՇԽ-ի կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում ԱՃԹՆ-ի ստանդարտը տարածելու դրական որոշման դեպքում, ինչպես նաև համակարգված բացահայտումները իրականացնելու համար պահանջվող օրենսդրական փոփոխությունների իրականացում</p>	<p>Հանդիպումներ, քննարկումներ, իրավական ակտերի նախագծեր</p>	<p>ԲՇԽ, պատկան պետական մարմիններ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն</p>	<p>Q3, Q4, 2021 Q1, Q2, Q3, Q4, 2022</p>	

<b>Իրական սեփականատերերի բացահայտման առցանց հանրային ռեգիստրի գործարկում, իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրային վերահսկողության հնարավորությունների աճ</b>						
7.1	41	Իրական սեփականատերերի առցանց ռեգիստրի գործարկման հանրային իրազեկման միջոցառում	Մամուլի ասուլիս	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	
2.5	42	Առցանց ռեգիստրի հարթակում իրական սեփականատերերի հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում/խորհրդատվություն	Ուսուցում/խորհրդատվություն, ԻՍ առցանց ռեգիստրում հրապարակված հայտարարագրեր	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ռեգիստրը սպասարկող կազմակերպություն	2021 2022	
	43	Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի բարելավման նպատակով իրավական ակտերի մշակում	Իրավական ակտերի նախագծեր	Իրական սեփականատերերի բացահայտման ախտատանքային խումբ, Արդարադատության նախարարություն, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	

	44	Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի բարելավման նպատակով մշակված իրավական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն	Իրավական ակտերի նախագծեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, Արդարադատության նախարարություն	2021 2022	
	45	ԻՍ բացահայտման հանրային առցանց ռեգիստրում հրապարակվող ԻՍ տվյալների մոնիտորինգ, քանակական վերլուծություն, որակական գնահատական՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաև ԻՍ հայտարարագրերի ներկայացման գործընթացի թույլ և ուժեղ կողմերի վերլուծություն	Քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, իրավական ակտերի նախագծեր	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, Իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խումբ	2021 2022	
	46	ԱՃԹՆ Ստանդարտի Իրական Սեփականատերերի 2.5 պահանջի վավերացման գնահատականի փաստաթղթով ԱՃԹՆ միջազգային քարտուղարության կողմից ներկայացված առաջարկների անդրադարձը/ հասցեագրում	Քննարկումներ, հանդիպումներ, կարծիքներ, վերլուծություն, լրացուցիչ տեղեկատվության տրամադրում, իրավական ակտերի նախագծեր՝ ըստ անհրաժեշտության	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ԻՍ բացահայտման աշխատանքային խումբ	Q2, Q3, Q4 - 2021	



	47	Իրական սեփականատերերի բացահայտման առցանց հանրային ռեգիստրի կատարելագործում՝ ըստ անհրաժեշտության	Կատարելագործված առցանց ռեգիստր, ԻՍ հայտարարագրերի առցանց ներկայացման ծրագրային խնդիրների վերացում	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմին, ընտրված կազմակերպություն	2021 2022	
<b>Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման վերաբերյալ ԲՇԽ-ի որոշման դեպքում՝ ՀՀ իրավական դաշտի համապատասխանեցում</b>						
	48	Հայաստանում ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման վերաբերյալ Անկախ Ադմինիստրատորի կազմած Նախնական ուսումնասիրության կազմում	Նախնական ուսումնասիրություն, ԲՇԽ որոշում	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, Անկախ ադմինիստրատոր	Q2, Q3 , 2021	
7.3	49	Հայաստանում ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման վերաբերյալ Անկախ Ադմինիստրատորի կազմած Նախնական ուսումնասիրության քննարկում, շրջանակի ընդլայնման նպատակահարմարության վերաբերյալ որոշման կայացում	հանդիպումներ, քննարկումներ, կարծիքներ, ԲՇԽ որոշումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, Անկախ ադմինիստրատոր	Q2, Q3, 2021	
<b>ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում</b>						

4.8/4.9	53 ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում ( ներառյալ՝ ինքնաշխատ բաց տվյալներ գեներացնող պորտալի/ԱՃԹՆ պաշտոնական կայքի/ և պատկան պետական մարմինների կայքէջերում բաց տվյալների սկզբունքով կանոնավոր հրապարակումների իրականացնելու հնարավորությունները)	տեխնիկական առաջադրանք	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, 2021	
---------	--	-----------------------	---	--------------	--

	54	Ուսումնասիրությունն իրականացնող կազմակերպության ընտրություն	պայմանագիր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	Համաշխարհային և բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային և ծրագրի գործողության ժամկետում միջոցառումը հնարավոր չի եղել իրականացնել:
	55	Ուսումնասիրության իրականացում և ներկայացում՝ ԲՇԽ-ի հաստատման համար	Ուսումնասիրություն	կատարող կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ	Q2, Q3, 2021	Այն կիրականացվի մինչև 2022թ. 2-րդ եռամսյակը ընկած ժամանակահատվածում:
<b>Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում</b>						
7.4	68	Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում	Ճանապարհային քարտեզի միջոցառումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային	2021 2022	

			խումբ, պետական մարմիններ		
69	Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ	հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	2021 2022	
70	Հանքարդյունաբերության ռազմավարության մշակմանը մասնակցություն	ԲՇԽ-ի աշխատանքային խմբի հանդիպումներ, առաջարկություններ, կարծիքներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	Q2, Q3, Q4 , 2021 Q1, Q2, 2022	
71	Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման Ճանապարհային քարտեզի լրամշակում	լրամշակված ճանապարհային քարտեզ	աշխատանքային խումբ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-	Q2, 2021, Q2, 2022	

				ԱՃԹՆ քարտուղարություն		
--	--	--	--	--------------------------	--	--

**Միջոցառումների կարգավիճակը**

**Իրականացված**

**Ընթացիկ**

**Չսկսված**

**Չիրականացված**